ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆՆԱ ԳՐԻՇԱՅԻ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աիդա Օնիկի Թոփուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լաուրա Թոռնիկի Ասատրյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Անահիտ Պետրոսի Արնաուդյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ.-ի նոյեմբերի 2-ին՝ ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ.-ի սեպտեմբերի 22-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի **արդիականությունը** պայմանավորված է տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի անձնակողմնորոշվածությամբ, իր անհատականությունը դրսևորելու, իրեն ոչ մեկի հետ չհամեմատելու և ֆիզիկապես առողջ, ինքնուրույն, ստեղծագործ, արարող անձնավորության բազմակողմանի և ներդաշնակ զարգացման արդի հրամայականով, կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը միտված աշխատանքների բովանդակության և ձևերի, նրանց իրականացման գործընթացի կատարելագործման անհրաժեշտությամբ:[1] «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ սահմանելու մասին»[2] ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի համաձայն մշակվել են սովորողների գնահատման չափանիշներ, որտեղ ասվում է, որ «ըստ նպատակի կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ՝ հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ»: Նշվում է, որ «ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուրի կամ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար»: Ձևավորող գնահատման խնդիրներից մեկն է «սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապի և սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերման ապահովումը», որը ենթադրում է «սովորողի տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ: Ձևավորող գնահատման ձևերը և մեթոդները ընտրում է ուսուցիչը: Այն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից»: Ուստի ինքնագնահատման հմտության ձեռքբերումը ոչ միայն 21-րդ դարի կարևորագույն հմտություններից մեկն է, այլև կանոնադրական պահանջ է:

Մեր ուսումնասիրության արդիականությունը նաև հիմնավորվում է հիմնախնդրի շուրջ հանրակրթության մեջ առկա մի շարք՝ տնտեսական և գործնական հակասություններով:

Դրանք հիմնականում հետևյալներն են.

1. Կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի՝ որպես նրա անձի ձևավորման կարևոր գործոնի ընդունման և դպրոցական պրակտիկայում այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքի նկատմամբ անվստահությամբ:
2. Ուսման մեջ առաջադիմության, հոգեկան և ֆիզիկական առողջության ապահովման, կրտսեր դպրոցականի բազմակողմանի զարգացման գործընթացում ինքնագնահատականի դերի և նրա ձևավորման ոլորտի վերաբերյալ կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների՝ անբավարար իրազեկվածությամբ ու պատրաստվածությամբ:

---

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760

3. Մանկավարժահոգեբանական գիտությունների մեջ մարդու ինքնագնահատականի ձևավորման գործընթացի կարևորության գիտակցման և կրտսեր դպրոցականի հետ իրականացվող մանկավարժական գործընթացում այդ հիմնախնդրի լուծմանը միտված մեթոդական հնարների, տեխնոլոգիաների, անհրաժեշտ գործիքակազմի անբավարար մշակվածությամբ, ուսուցիչների, դաստիարակների, կրթության պատասխանատուների ոչ համարժեք կարողունակություններով:
4. Կրտսեր դպրոցական տարիքային փուլի՝ որպես ինքնագնահատականի ձևավորման ամենանպատավոր և արդյունավետ ժամանակաշրջանի ընդունման, հայի ազգային հոգեկերտվածքում առկա մի շարք մոտեցումների անառարկելի ընդունման և կիրառման սովորություններով:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացի մանկավարժական պայմանները հիմնախնդրի ուղղությամբ մեր իրականացրած ուսումնասիրության շրջանակներում մեզ հիմնականում հետաքրքրել են հետևյալ հարցերը.

- Կրտսեր դպրոցական տարիքի ո՞ր շրջաններն են առավելապես նպաստավոր նրանց ինքնագնահատականի ձևավորման հարցում:
- Հայ մարդու հոգեկերտվածքում կրտսեր դպրոցականների ինքնագնահատականի ձևավորման ուղղությամբ կա՞ն արդյոք էական դիրքորոշումներ, որո՞նք են դրանք և ի՞նչ ազդեցություն ունեն հայ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացի արդյունավետության վրա:
- Ինչպիսի՞ մանկավարժական պայմաններ, մեթոդներ, հնարներ և միջոցներ են անհրաժեշտ՝ ապահովելու համար կրտսեր դպրոցականի ինքնգնահատականի ձևավորման գործընթացի արդյունավետությունը:

Նշված և մեր հիմնախնդրին առնչվող մի շարք այլ հարցեր քննարկման կարիք ունեն, դրանց վերաբերյալ եզրակացություններով, խնդիրների լուծման ելքերի բացահայտմամբ էլ պայմանավորված է մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացում բացահայտել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները, մշակել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր:

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմաններն են:

Հետազոտության առարկան կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման առկա գործընթացն է:

Նշված նպատակների հիման վրա ձևավորվել է մեր հետազոտության վարկածը: **Հետազոտության վարկածը**. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացն արդյունավետ կարող է լինել, եթե՝

• դիտարկվող տարիքային փուլում ինքնագնահատականի ձևավորումը դիտվի որպես տարրական կրթության գերակա նպատակներից մեկը, ուսումնասիրվի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացը, մշակվեն անհրաժեշտ մանկավարժական պայմանները.

• մշակվի և տարրական դպրոցում ներդրվի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր, որում արտացոլված լինեն կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության բաղադրիչները, առանձնահատկությունները, ինքնագնահատման գործընթացի կազմակերպման սկզբունքները, մեթոդները, ուսուցչի և սովորողի կոմպետենցիաները, մշակված լինեն նաև ծնողներին ուղղված երաշխավորություններ:

Հետազոտության խնդիրները՝

1. Ուսումնասիրել անձի ինքնագնահատման կարողության ձևավորման հիմնախնդիրը մանկավարժության պատմության մեջ:

2. Ուսումնասիրել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի ժամանակակից պրակտիկան արդի տարրական դպրոցում:

3. Բացահայտել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները:

4. Մշակել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ հետազոտական **մեթոդները**.

• ատենախոսության հիմնախնդրի վերաբերյալ գրականության ուսումնասիրում, հիմնական սկզբունքների քննարկում, հասկացությունային եզրութաբանական վերլուծություն և համադրում - ընդհանրացում - եզրահանգում,

• կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված գործունեության ծավալում, արդյունքների վերլուծություն, դիտում, հարցախույզ, զրույց, աշակերտների և մանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում: Հետազոտության տարբեր փուլերի ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների մաթեմատիկական մշակում և վիճակագրական ամփոփում:

Մեր իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա սահմանել ենք մեր հետազոտության նորույթն ու տեսագործնական արժեքները:

Հետազոտության նորույթը.

1. Հիմնախնդիրը դիտարկվել է հայ և արտասահմանյան մանկավարժության պատմության համատեքստում:

2. Բացահայտվել են կրթադաստիարակչական գործընթացում ձևավորվող կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի էությունը, դրսևորման ձևերը, առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով ինչպես հատուկ նպատակով իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները, այնպես էլ տարրական դպրոցում իբրև ուսուցիչ մեր աշխատանքի երկարամյա պրակտիկան ու փորձառությունը:

3. Դիտարկել ենք և համակարգել ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող հիմնական գործոնները և մշակել անհրաժեշտ մանկավարժական պայմանները: Մշակել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր, որի մեջ ներառել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության կառուցվածքային բաղադրիչները, այդ գործընթացի կազմակերպման սկզբունքները, մեթոդներն ու առանձնահատկությունները, մանկավարժական պայմանները, ուսուցչի և սովորողի կոմպետենցիաները, ծնողներին ուղղված երաշխավորությունները:

4. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման անհրաժեշտությունը, գործընթացն ու արդյունքները դիտարկել ենք նրա առողջության և երջանկության ապահովման համատեքստում:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Ժամանակակից գիտական տեսանկյունների և մեր ուսումնասիրությունների ու անձնական մանկավարժական փորձի հիման վրա ներկայացված մեթոդական համալիրը հարստացնում է հայ և արտասահմանյան մանկավարժների գաղափարների համալիրը: Քննարկվող հիմնախնդրի լուծման սկզբունքների, մեթոդների, մանկավարժական պայմանների, ուսուցիչների և աշակերտների կոմպետենցիաների, ծնողների համար մեր մշակած երաշխավորությունները կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ոլորտում կարող են համարվել տեսական գիտելիքների բանկ:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեր առաջարկած մեթոդական համալիրի բովանդակությունը համապատասխանում է տարրական դպրոցի առարկայական չափորոշիչների գնահատման նոր կարգի, մասնավորապես ձևավորող գնահատման պահանջներին, բխում է հանրակրթության այդ օղակի կրթության բաղադրիչներից և կարող է կիրառվել տարրական դպրոցում՝ հատկապես գնահատման գործընթացում: Այն կարող է օգտակար լինել ուսուցիչներին, մեթոդիստներին, ապագա մանկավարժներին, կրթության քաղաքականությունը մշակողներին:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք **երեք փուլով.**

I (2016-2018թթ.). տեղեկատվական-որոնողական փուլ. իրականացրել ենք հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, վերլուծել ենք և ընդհանրացրել կրտսեր

դպրոցականի արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ հայրենական փորձը, այն մոտեցումներն ու հայեցակարգերը, որոնք օգտակար հենք են ծառայել մեր հետազոտության համար:

II (2019-2020թթ.) ձևավորող փուլ. ուսումնասիրել և պրակտիկայում կիրառել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մեթոդիկաներ, կրտսեր դպրոցականների ինքնագնահատականի ձևավորման տեխնոլոգիաներ, իրականացրել ենք մեր մշակած մանկավարժական պայմանների արդյունավետությունը որոշող ուսումնասիրություններ:

III (2021-2023) վերլուծական-համադրական-ամփոփիչ փուլում իրականացրել ենք փորձարարության տվյալների ու մեր ձեռքբերումների վերլուծություն և ամփոփում, ատենախոսության բովանդակության շարադրում, մշակել ենք կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր:

Պաշտպանության ենք ներկայացնում հետևյալ **դրույթները**.

1. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորումը տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի գերակա նպատակներից մեկն է և հանդես է գալիս որպես նրա անձի անհատականության նկարագրի կարևոր բաղադրիչ, նրա առողջության և երջանկության ապահովման գործոն: Այն խարսխվում է նրա՝ ճանաչողական - ուսումնական գործունեության մակարդակի, ձեռք բերած արժեհամակարգի վերաբերյալ սեփական և միջավայրի գնահատականի ամբողջության վրա:

2. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորումն ընթանում է մանկավարժական բազմաբնույթ համակարգային գործոնների ազդեցության շնորհիվ՝ որպես նրա ուսումնական գործունեության արդյունք, որի հիմքում ընկած են ինչպես կրտսեր դպրոցականի անձնային-անհատական և տարիքային բնութագրիչները, այնպես էլ ազգային հոգեկերտվածքով պայմանավորված մի շարք գործոններ:

3. Կրտսեր դպրոցականի համարժեք ինքնագնահատականի ձևավորման վրա ազդում են մի շարք՝ օբյեկտիվ (դպրոցականի ընտանիքը, շրջակա միջավայրը, դպրոցը՝ մանկավարժները, դասընկերներն ու տարեկիցները, ուսումնական գործունեության պայմանները) և սուբյեկտիվ (կրտսեր դպրոցականի սեփական արժեքները, ձեռքբերումները, իր հնարավորությունները և ձեռքբերումները գնահատելու ունակությունը, անձնային առանձնահատկությունները, արժեհամակարգի որոշակի բաղադրիչների առկայությունը) գործոններ:

4. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիրը թույլ է տալիս կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման խնդիրը դիտարկել որպես տարրական կրթության առաջադիր նպատակ,

իսկ ընդհանուր առմամբ՝ որպես կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության և համապատասխան վարքի ձևավորման ու դրա կարևորության՝ անհրաժեշտության գիտակցում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապացուցվում են հիմնախնդրի վերաբերյալ ստվարաձավալ գրականության ուսումնասիրությամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային և վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, հետազոտվողների խմբի բավարար քանակակազմով, մեր մանկավարժական մեկ տասնյակից ավելի տարիների փորձից կուտակած փաստացի նյութերի մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Հետազոտության արդյունքները և հետևությունները 2016-2023 թվականներին քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի նիստերում, հատուկ սեմինարներում, կոնֆերանսներում, Երևանի Հ. Հայրապետյանի անվան համար 78 հիմնական դպրոցի տարրական դասարանների մեթոդմիավորման նիստերում:Դիտարկումների և հետազոտությունների արդյունքների հիման վրա տպագրված հոդվածները տեղ են գտել հայկական և միջազգային գիտական ամսագրերում:

Հետազոտության բազան. ուսումնասիրություններն իրականացրել ենք Երևանի Հ. Հայրապետյանի անվան համար 78 հիմնական դպրոցում, որտեղ մենք աշխատում ենք որպես ուսուցիչ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 7 աղյուսակ, 14 տրամագիր, 6 գծապատկեր և 5 հավելված: Ատենախոսությունը կազմում է համակարգչային շարվածքով 141 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, բացահայտված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «**Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկավարժության մեջ**» վերնագրով գլխում քննարկել ենք հետևյալ հիմնախնդիրները՝

- Մանկավարժների մոտեցումները անձի ինքնագնահատականի ձևավորման մասին,

- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման առանձնահատկություններն ու դրդապատճառները:

Ատենախոսության առաջին գլխում վերլուծել ենք հայ և արտասահմանյան մանկավարժների հայացքները՝ անձի, մասնավորապես դպրոցականի ինքնագնահատականի, նրանց ինքնագնահատման չափանիշների և բնութագրիչների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները:

1. Դեռևս անտիկ աշխարհի մտածողները կարևորել են մարդու՝ իր մասին ունեցած կարծիքի ձևավորման հիմնախնդիրը, մատաղ սերնդի դաստիարակության գործընթացում էական են համարել նրա հնարավորություններն ու դրանց դրսևորման համար այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կնպաստեն նրա ինքնաճանաչմանը, ինքնագնահատմանը, թեև ոչ բոլոր մտածողների տեսության մեջ է գործածվում ինքնագնահատական եզրույթը:

2. Անձի գնահատականն ըստ նշված մտածողների՝ կայուն չէ. մանկության և վաղ կրտսեր դպրոցական տարիքում այն ոչ համարժեք բարձր է. երեխաներն իրենց ինքնագնահատականը սահմանում են՝ ոչ այնքան հիմք ընդունելով սեփական արժեքներն ու ձեռբերումները, որքան իրենց երևակայությամբ ձևավորված ցանկալին: Սակայն աստիճանաբար անձի ինքնագնահատականը տարիքի հետ դառնում է համարժեք կայուն:

3. Իր և այլոց կողմից երեխայի հնարավորությունների ու տաղանդների ճանաչումը և գնահատումը համարվել են նրա զարգացման առաջընթացի խթանիչներ, անձի ինքնագնահատականի ձևավորման գերակա գործոններ:

4. Երեխայի կողմից ինքնաճանաչումը, իր բարձրարժեքության ընդունումը պատմականորեն դիտարկվել են որպես ինքնագնահատման խթանիչներ, որոնց հիմքում ընկած են՝

- շրջապատի կողմից երեխայի ընդունված և գնահատված լինելը,
- երեխայի կողմից սեփական հնարավորությունները ճանաչելը, գնահատելը և սեփական ուժերին հավատալը,
- ինքնադրսևորման տարբեր ոլորտներում հաջողությունների հասնելու համար շրջապատից մշտապես աջակցություն ստանալը,
- երեխայի ինքնագնահատականի զարգացմանը նպաստող գենետիկորեն բնությունից նրան տրված ընդունակությունների ինքնաբացահայտմանը և ինքնադրսևորմանը նպաստող կրթադաստիարակչական բարենպաստ պայմանների ապահովումը,
- երեխայի պահանջմունքների բավարարումն ու ավելիին ձգտելու (ինքնագերազանցման) դրդապատճառների ապահովումը,
- երեխայի բազմակողմանի զարգացմանը նպաստող լիարժեք կրթությունը, ազատությունների և իրավունքների ապահովումը:

Ատենախոսության այս գլխում ներկայացրել ենք նաև կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկություններն ու դրդապատճառները: Որպես ակնառու առանձնահատկություններ կարևորել ենք այն, որ.

- Կրտսեր դպրոցականների ինքնագնահատականը սովորաբար ոչ համարժեք-բարձր է լինում և ոչ միշտ է համընկնում շրջապատի մարդկանց կողմից նրանց տված գնահատականին:
- Տարիների ընթացքում կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձգտումների, հավակնությունների սահմանային շեմը բարձրանում է՝ նրանից պահանջելով ավելի մեծ ջանքեր:
- Սեփական և դասընկերների ինքնագնահատականի բաղադրիչներում բացակայում են արժեհամակարգի առավել խորքային բաղադրիչները:
- Կրտսեր դպրոցականն ունի համադասարանցիների, տարեկիցների կողմից իրեն գնահատելու պահանջմունք, որի բավարարման համար նա արժևորում է ոչ այնքան ուսուցչի նշանակած գնահատանիշը, որքան նրա կողմից խրախուսական, դրվատական մեկնաբանությունները:
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացումն ու ձևավորումը մեծապես պայմանավորված են նրա գործունեության դրդապատճառներով, սրանք իրենց հերթին՝ իրավիճակներով, և ենթակա են փոփոխություններին՝ անհրաժեշտ է նրանց ինքնագնահատականի ձևավորումը դարձնել գերակա նպատակ, իսկ դրան միտված աշխատանքին տալ շարունակական բնույթ՝ փոփոխության ենթարկելով դրդապատճառների դրսևորումները:
- Միայն դրական դրդապատճառներ ունեցող և իրենց ձեռքբերումների գնահատականը վայելող երեխաներն են սովորաբար ունենում բարձր ինքնագնահատական. եթե երեխան մշտապես բավարարվում է «անհաջողություններից խուսափելու» կամ անհաջողությունը գործունեության այլ ձևերով փոխհատուցելու դրդապատճառներով, նա մշտապես հարմարվում է ցածր առաջադիմության դիրքորոշմանը, որի արդյունքում ձևավորվում է հոգեբանական անկայուն իրավիճակ, ցածր ինքնագնահատական, որն էլ իր հերթին խոչընդոտում է անձի զարգացմանը:

Այս գլխում դիտարկել և քննարկել ենք նաև կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի հիմքում ընկած ուսումնական գործունեությունը խթանող հետևյալ դրդապատճառները.

- ա) ուսումնաճանաչողական,
- բ) բարձր վարկանիշային ձգտման,
- գ) անհաջողություններից խուսափելու,
- դ) փոխհատուցող:

Ատենախոսության երկրորդ՝ «**Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները**» վերնագրով գլխում դիտարկել ենք հետևյալ հիմնախնդիրները՝

- Ինքնագնահատականի էությունն ու նրա ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները,
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ազդեցությունը նրա առողջության վրա,
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները:

Հիմք ընդունելով անձի ինքնագնահատման ոլորտի շուրջ մանկավարժների մոտեցումները՝ մենք սահմանել ենք, որ նշված գիտնականներն ինքնագնահատականի էությունը դիտարկում են որպես՝

ա. անձի ինքնախրախուսման կամ ինքնապարսավանքի, ինքնագնահատման և չգնահատման զգացումներ,

բ. մարդու կողմից իր գործունեության և ընդհանուր վարքի կարգավորման որակ,

գ. ինքնավերաբերմունքի և ինքնագիտակցության մակարդակի զարգացման որոշակի տեսակ,

դ. անձի զարգացման բազմաբաղադրիչ գործընթացի արդյունավետության վրա ազդող գործոն:

Ինչպես հայտնի մանկավարժների, հոգեբանների ուսումնասիրությունների, նրանց արդյունքների հիման իրականացրած դիտարկումների, այնպես էլ մեր ուսուցչական փորձի և ուսումնասիրությունների հիման վրա մենք առանձնացրել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնները.

1. Ընտանեկան դաստիարակության ոճերը, արժեքները:
2. Ուսումնական արդյունավետ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ սովորողների ունակությունների առկայությունը (բացակայությունը), դրանց վերաբերյալ ուսուցչի գնահատականը:
3. Սեփական ձեռքբերումներին իր և համադասարանցիների տված գնահատականը:
4. Ուսումնական ոլորտում ձեռքբերումների ինքնագնահատումը:

Այս գլխում վերլուծել ենք նաև կրտսեր դպրոցականի առողջության և ինքնագնահատականի առնչությունները՝ հիմնավորելով, որ մանկավարժության, հոգեբանության, առողջապահական գիտություններում, ընդհանրապես մանկավարժական առողջագիտության մեջ ամենատարբեր տեսանկյուններից կարևորվում է երեխաների առողջության պահպանման հիմնախնդիրը: Ներկայացրել ենք նաև մեր մշակած և փորձակված մի քանի վարժանքներ («Բարև, ես եկա», «Եռագույն պատկերներ», «Տրամադրության լուսակիր»), ինքնագնահատականի վերաբերյալ

իրադրություններ, դիտարկել դրանց կիրառման ընթացքը և ուսուցիչների ու ծնողների արձագանքները:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացման, այդ գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ շուրջ տասը տարի իրականացրած փորձարարական աշխատանքների և մեր անձնական մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերած արդյունքների վերլուծության հիման վրա մշակել ենք և այս գլխում ներկայացրել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները: Մեր մշակած մանկավարժական պայմանների հաշվառումը և կիրառումը կարող է խթանել տարրական դպրոցում աջակցող և անվտանգ միջավայրի ստեղծումը, նպաստել կրտսեր դպրոցականի ինքնաճանաչմանն ու ինքնակարգավորմանը, ինքնագիտակցմանն ու օբյեկտիվ ինքնագնահատմանը:

Ատենախոսության երրորդ՝ «**Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում**» վերնագրով գլխում դիտարկել ենք հետևյալ հիմնախնդիրները՝

- Ուսուցիչը որպես կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպիչ,
- Ինքնագնահատման կարողության ստուգումը «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի միջոցով,
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության դիտարկում ծնող-աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով,
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդական համալիրը:

Ատենախոսության վերջին գլխում ներկայացրել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպմանն առնչվող ուսուցչի կոմպետենցիաները: Դրանք հետևյալն են.

- ինքնաճանաչման և ինքնագնահատման ռազմավարությունների իմացություն,
- անվտանգ միջավայրի ստեղծման կարողություն,
- գիտակցության առկայություն,
- նպատակադրում և պլանավորում,
- մշտական դիտարկում և ռեֆլեքսիա,
- պատասխանատվություն և ինքնուրույնություն,
- ճանաչում և գնահատում,
- հարցադրում և պատասխան:

Ատենախոսության այս գլխում ներկայացրել ենք նաև մեր իրականացրած աշխատանքները. դիտարկել ենք Վ.Գ.Շչուրի «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի

միջոցով կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ստուգման ընթացքն ու արդյունքները: Մենք եկել ենք այն եզրակացության, որ աշակերտների ցածր ինքնագնահատականն ունի բազմաթիվ պատճառներ, դրանց բացահայտման և անհրաժեշտ աջակցության ցուցաբերման համար կարևոր է մանկավարժների և ծնողների համատեղ գործունեությունը՝ նպատակամղված.

- ընտանեկան բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը,
- մանկական կոլեկտիվում հանդուրժողականության, փոխօգնության և բարյացակամության ձևավորմանը,
- ուսուցչի կողմից աշակերտներին ցուցաբերվող մանկավարժական սատարման տեխնոլոգիաների տիրապետմանն ու աշակերտների նկատմամբ (մասնավորապես ցածր ինքնագնահատական ունեցող) ցուցաբերվող աջակցությանը,
- յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ դրսևորած հոգատարության, նրբանկատության, հանդուրժողականության, զգացմունքային բարենպաստ մթնոլորտի ստեղծմանն ու աշակերտներին հասցեագրված հումանիստական տրամադրվածությանն ու համապատասխան վերաբերմունքի դրսևորմանը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված ծնող-աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով մեր իրականացրած հարցախույզի արդյունքները մեզ հանգեցրին ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացին սերտորեն առնչվող հետևյալ ընդհանրացումներին.

- Ծնողների ճնշող մեծամասնությունը կարևորում է երեխաների ուսումնական գործունեության մեջ ունեցած ձեռքբերումները՝ ուսման մեջ առաջադիմությունը: Այս մոտեցումը փոխանցվում է երեխաներին, որոնք նույնպես իրենց և իրենց ընկերներին գնահատում են հիմնականում ուսումնական գործընթացում ունեցած ձեռքբերումներով:
- Երեխաների անձնային որակների մեջ ծնողներն առաջին հերթին գնահատում են հնազանդությունը ու հարգանքն ընտանիքի անդամների նկատմամբ՝ գրեթե չկարևորելով հանդուրժողականությունը, ապրումակցումը, ընկերասիրությունը, մաքրակենցաղությունը և այլն:
- Ծնողներն ունեն մանկավարժական գիտելիքների կարիք. մեծ մասը ծանոթ չեն կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկություններին, ժամանակակից դաստիարակչական մեթոդներին առնչվող մոտեցումներին: Երեխաների հետ իրականացվող դաստիարակչական գործընթացում նրանց ցուցաբերած մանկավարժական սկզբունքներն ու մեթոդները հաճախ հասկանալի, ընկալելի չեն իրենց երեխաներին. հակասություններ են նկատվում, օրինակ, ծնողների կողմից պատժի, խրախուսանքի կիրառման, երեխաների արժեքների գնահատման և դրանց՝ երեխաների տեսանկյունից ընկալման հարցերում:

- Ուշագրավ է, որ երեխաներն ամբողջությամբ գիտակցում են, թե ինչ են իրենցից ակնկալում իրենց ծնողները, ինչպիսի որակներ են ձգտում ձևավորել իրենց անձնային նկարագրում, և իրենք նույնպես կարևորում են դրանք:
- Ինչպես ծնողները, այնպես էլ նրանց երեխաները ոչ միշտ են հպարտանում միմյանցով: Երեխաների մեծ մասն իրազեկված չեն իրենց ծնողների գործունեության ոլորտներից, արժեհամակարգից, իսկ ծնողները հպարտանում են հիմնականում բարձր առաջադիմությամբ կամ որևէ ոլորտում հաջողություններ ունեցող իրենց զավակներով, մի մասն էլ գտնում է, որ գովեստի խոսքեր պետք չէ ասել երեխաներին:
- Երեխաները հիմնականում կարևորում են իրենց ծնողների առողջական, նյութական բարեկեցությունը և ազատ ժամանակը:

Մեր իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների հիման մշակել ենք և երրորդ գլխում ներկայացրել մեթոդական համալիր, որի բաղադրիչները մեծապես նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը: Մեթոդական համալիրի նպատակն է կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության և համապատասխան վարքի ձևավորումն ու սեփական զարգացման գործընթացում դրա կարևորության ու անհրաժեշտության գիտակցումը: Վերջնարդյունքը ինքնագնահատման կարողություն ունեցող կրտսեր դպրոցականն է: Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիրը ներկայացված է գծապատկեր 1-ում:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Նպատակը՝ կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների և համապատասխան վարքի ձևավորումն ու սեփական զարգացման գործընթացում դրա կարևորության ու անհրաժեշտության գիտակցումն է:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացն իրականացնող ուսուցչի և աշակերտի կոմպետենցիաները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված երաշխավորություններ ծնողների համար

Վերջնարդյունքը՝ ինքնագնահատման կարողություններ ունեցող կրտսեր դպրոցական:

Գծապատկեր 1

Մեր մշակած մեթոդական համալիրի բաղադրիչներն են.

1. Կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության կառուցվածքային բաղադրիչները,

2. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները,

3. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդները,

4. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները,

5. ա/ Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացն իրականացնող ուսուցչի կոմպետենցիաները,

բ/ Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կոմպետենցիաները,

6. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները,

7. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված երաշխավորություններ ծնողների համար:

Ատենախոսության մեջ դիտարկել և ներկայացրել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեր մշակած մեթոդական համալիրի բոլոր բաղադրիչները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման ուղղությամբ հայրենական և արտասահմանյան հետազոտությունների ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտողների ճնշող մեծամասնությունը կարևորում է անձի ինքնագնահատման կարողությունը և հիմնավորում, որ այդ ուղղությամբ աշխատանքները առավելապես արդյունավետ են սկսել տարրական դպրոցում:

2. Կրտսեր դպրոցականների շրջանում մեր իրականացրած ուսումնասիրության ընթացքում բացահայտեցինք, որ ուսումնական գործընթացում նրանք ունեն ինքնագնահատման տարբեր աստիճաններ. համարժեք բարձր, համարժեք ցածր, ոչ համարժեք բարձր, ոչ համարժեք ցածր, համարժեք միջին և այլն: Փաստեցինք, որ անձի աճով պայմանավորված՝ նրա ինքնագնահատականի զարգացման շարժընթացը դրսևորվում է իրատեսական, գիտակցական, հիմնավորվածության, տարբերակվածության որակների ձեռքբերմամբ:

3. Կրտսեր դպրոցականների ինքնագնահատականի տարիքին համահունչ զարգացման գործընթացի ուսումնասիրությունների արդյունքները թույլ տվեցին եզրահանգել, որ՝

• ինքնագնահատականի ամբողջական ձևավորումը պայմանավորված է անձի սուբյեկտիվ որակներով՝ նախաձեռնողականությամբ, նպատակասլացությամբ, արդարացիությամբ, համագործակցությամբ, փոխգործունեությամբ և այլն,

• տարեկիցների հետ հարաբերություններում անձի ինքնագնահատականի նկատմամբ վերաբերմունքի ձեռքբերումը մեծապես պայմանավորված է միջավայրի զգացմունքայնությամբ, տագնապայնությամբ, պահանջկոտության մակարդակով, ինքնագնահատման համարժեք բարձրությամբ, մանկական կոլեկտիվի համախմբվածությամբ և հումանիստական միջավայրի առկայությամբ:

4. Ուսումնասիրության արդյունքները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականների ինքնագնահատման ձևավորման մեթոդները հազվադեպ են կիրառվում, որի հետևանքով տարրական դասարաններում երեխաներն ուսումնական գործընթացում չեն դրսևորում ինքնաճանաչման, ինքնագնահատման, ինքնավերլուծության, ինքնաքննադատության, ինքնաանդրադարձի կիրառման ունակություններ: Սովորողների մեծամասնությունը չի դրսևորում համարժեք ինքնագնահատման կարողություն:

5. Մեր մշակած կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմաններն ու մեթոդական համալիրի բովանդակությունը համապատասխանում են տարրական դպրոցի առարկայական չափորոշիչների պահանջներին, բխում են հանրակրթության այդ օղակի կրթության բաղադրիչներից ևարդյունավետորեն կարող են կիրառվել տարրական դպրոցում՝ հատկապես գնահատման գործընթացում: Դրանք մեծապես կհարստացնեն մանկավարժության պատմությունն ու տեսությունը, օգտակար կլինեն ուսուցիչներին, ծնողներին, կրթության քաղաքականությունը մշակողներին, կնպաստեն գործընթացն ու արդյունքները երեխաների առողջության և երջանկության ապահովման տեսանկյունից դիտարկելուն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Գալստյան Ա., Ինքնագնահատման կարողությունը որպես կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման միջոց, «Կրթության որակի չափման, գնահատման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, Մանկավարժ, 2015, էջ 43-46:
2. Գալստյան Ա., Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման մեր փորձը, «Մանկավարժական միտք» հանդես, 1-2, Երևան, «Զանգակ» հրատ., 2016, էջ 69-73:
3. Գալստյան Ա., Կրտսեր դպրոցականների ինքնագնահատականի հիմնախնդրի շուրջ, «Կրթության ժամանակակից հիմնախնդիրները» երիտասարդ գիտնականների

ամառային դպրոցի մասնակիցների հեղինակային նախագծերի ժողովածու: Երևան, Մանկավարժ, 2016, էջ 139-142:
4. Գյուլամիրյան Ջ., Գալստյան Ա., Արձագանքել երեխայի սխալներին՝ առանց նրա արժանապատվությունը վիրավորելու, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները»: Երևան, Մանկավարժ, 2016, էջ 38-43:
5. Գալստյան Ա., Տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաների ինքնագնահատման հիմնախնդիրը, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդվածների ժողովածու:էջ 28-33, Երևան, 2017:
6. Գալստյան Ա.,Սեփական արժեքների ճանաչումը և ինքնագնահատականի ձևավորումը, «Մանկավարժական միտք» հանդես, 3-4: Երևան, «Զանգակ» հրատ., 2017, էջ 83-85:
7. Թոփուզյան Ա., Գալստյան Ա., Հայ մանկավարժներն անձի ինքնագնահատականի մասին, «Մանկավարժական միտք» հանդես, 4: Երևան, «Զանգակ» հրատ., 2018, էջ 78-82:
8. Галстян А., Возможности повышения самооценки детей, испытывающих затруднения в учебном процессе школы. Подготовка учителя начальных классов: проблемы и перспективы: материалы Международной научно-практическох конференции, г. Минск, 27 октября 2016г./ Белорус. гос. пед. ун.-т ум. М. Танка; редкол.: Н.В.Жданович. - Минск: БГПУ, 2017.-368с., стр.18-20.
9. Galstyan A., Armenian pedagogues' views on a person's self-esteem. «Problems of science», USA, Boston, November 21, 2019, p. 51-54.

ГАЛСТЯН АННА ГРИШАЕВНА

ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ФОРМИРОВАНИЯ СПОСОБНОСТИ САМООЦЕНКИ МЛАДШЕГО ШКОЛЬНИКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 2-го ноября 2023 года в 12^{00}, на заседании специализированного совета «Педагогика» 020 ВАК РА, действующего при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, г. Ереван, Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертации обусловлена личностно-ориентированным характером осуществляемого в начальной школе учебно-воспитательного процесса, актуальным требованием воспитания младшего школьника, проявляющего собственную

индивидуальность и неповторимость, желающего быть физически здоровой, самостоятельной, творческой, разносторонне и гармонично развитой личностью, необходимостью совершенствования содержания и форм работы, направленной на формирование самооценки младших школьников, и процесса ее выполнения.В соответствии с приказом министра ОНКС РА «Об установлении критериев оценивания учащихся государственных общеобразовательных учреждений» были разработаны критерии оценивания учащихся, где говорится, что «в зависимости от цели используются три вида оценивания учащихся: диагностическое, формирующее и итоговое». Отмечается, что «формирующее оценивание есть составная часть воспитательной работы, целью которой является выявление достижений, трудностей, упущений каждого ученика или класса для совершенствования процесса учебы и обучения». Одной из задач формирующего оценивания является «обеспечение конструктивной обратной связи, способствующей развитию обучаемого и приобретению обучаемым навыков самооценки и самоанализа», что предполагает «сравнение текущих индивидуальных учебных достижений обучаемого с его предыдущими достижениями. Формы и методы формирующего оценивания выбирает учитель. Оно осуществляется учителем и обучаемым (самооценка, взаимооценка)». Поэтому приобретение навыков самооценки является не только одним из важнейших навыков 21 века, но и уставным требованием.

Цель исследования – выявить педагогические условия организации процесса формирования способности самооценки младшего школьника в образовательно-воспитательном процессе начальной школы, разработать методический комплекс, способствующий формированию способности самооценки младшего школьника.

Гипотеза исследования. Процесс формирования способности самооценки младшего школьника может быть эффективным, если:

- формирование самооценки на данном возрастном этапе будет рассматриваться как одна из приоритетных задач начального образования, будет изучен процесс формирования самооценки младших школьников, разработаны необходимые педагогические условия;
- будет разработан и внедрен в начальной школе методический комплекс, способствующий формированию самооценки младших школьников, в котором найдут свое отражение компоненты и особенности способности самооценки младших школьников, принципы и методы организации процесса формирования самооценки, компетенции учителя и обучаемого, будут разработаны также гарантии для родителей.

Задачи исследования:

1. Изучить проблему формирования способности самооценки личности в истории педагогики;
2. исследовать практику процесса формирования способности самооценки младших школьников в условиях современной начальной школы;
3. выявить педагогические условия организации процесса формирования самооценки младшего школьника;
4. разработать методический комплекс, способствующий формированию способности самооценки младшего школьника.

Новизна исследования:

1. Проблема рассматривалась в контексте истории армянской и зарубежной педагогики.

2. Выявлена сущность формируемой в образовательном процессе самооценки младшего школьника, формы ее проявления и особенности, при этом за основу были взяты как результаты специально организованных исследований, так и наш многолетний опыт работы в качестве учителя начальных классов.

3. Осуществлено наблюдение за основными факторами, способствующими формированию самооценки младших школьников в процессе обучения, и проведена их систематизация, определены необходимые педагогические условия. Разработан методический комплекс, способствующий формированию способности самооценки младших школьников, компонентами которого являются особенности, принципы и методы организации процесса формирования способности самооценки младших школьников, педагогические условия, компетенции учителя и обучаемого и гарантии для родителей.

4. Необходимость, процесс и результаты формирования самооценки младшего школьника рассматривались в контексте обеспечения его здоровой и счастливой жизни.

Теоретическая значимость исследования. Методический комплекс, представленный на основе изучения современных научных взглядов, специальных исследований и личного педагогического опыта, обогащает комплекс идей армянских и зарубежных педагогов. Разработанные нами для решения анализируемой проблемы принципы, методы, педагогические условия, компетенции учителей и учащихся, гарантии для родителей можно считать банком теоретических знаний в сфере формирования самооценки младшего школьника.

Практическая значимость исследования. Содержание предлагаемого нами методического комплекса, способствующего формированию способности самооценки младшего школьника, соответствует новому порядку оценивания предметных стандартов для начальной школы, в частности, требованиям формирующего оценивания, обусловлено компонентами данного звена общего образования и может быть использовано в начальной школе, особенно в процессе оценивания. Предлагаемый нами методический комплекс может быть полезен для учителей, методистов, будущих педагогов, специалистов, разрабатывающих политику образования.

Структура и объем исследования. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений. Содержит 7 таблиц, 14 диаграмм, 6 графиков, 5 приложений. Объем работы – 141 стр. компьютерного набора.

GALSTYAN ANNA GRISHA

PEDAGOGICAL CONDITIONS OF THE FORMATION OF YOUNGER SCHOOLCHILD'S SELF-ASSESSMENT ABILITY

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 "Pedagogical theory and history".

The defense of the thesis will be held at SCC of RA 020 degree-awarding scientific council's session at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University on November 2, 2023, at 12^{00} . Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

SUMMARY

The relevance of the research is conditioned by the person-oriented nature of educative process carried out in junior school, by the contemporary imperative of expressing one's own individuality, of not comparing oneself to anybody and of multilateral, harmonious development of a physically healthy, independent, creative and inventive personality, as well as by the necessity of the content and forms of the activities intended for the formation of younger schoolchild's self-assessment ability and of the idealization of that process.Learners' assessment standards have been developed according to the order of the minister of ESCS of RA on "Defining assessment standards for the learners of state general education institutions". The order states that "according to the purpose three types of pupils' assessment are used: diagnostic, formative and summative". It is noted that "formative assessment is a component of educational process aimed at discovering everyone's or class's achievements, difficulties and shortcomings in order to improve the process of teaching and learning". One of the goals of formative assessment is "to provide constructive feedback and self-assessment, self-analyzing skills gained by the learners which promote their development". This suggests "the comparison of a learner's current personal educational achievements to the previous ones. The teacher chooses the forms and methods of formative assessment. It is carried out by the teacher and the learner (self-assessment and mutual assessment). Hence, gaining the ability of self-assessment is not only one of the most important skills of the 21st century but also a legislative demand.

The aim of our study is to discover the pedagogical conditions of organizing the process of the formation of younger schoolchild's self-assessment ability during the educative process carried out in elementary school, as well as to develop a methodical complex which will foster the formation of younger schoolchild's self-assessment ability.

The hypothesis of the study. The process of the formation of younger schoolchild's self-assessment ability may be effective, if

- the formation of self-assessment ability in the observed age stage is regarded as one of the highest goals of elementary education, the process of the formation of younger schoolchild's self-assessment ability is examined and necessary pedagogical conditions are elaborated.
- a methodical complex fostering the formation of younger schoolchild's self-assessment ability is designed and implemented in elementary school. This complex should reflect the components and peculiarities of younger schoolchild's self-assessment abilities, the principles and methods of organizing self-assessment process, as well as teacher's and learner's competences. Guarantees directed to the parents should also be developed.

The following objectives of the study have been set forth:

1. to examine the main objective of the formation of a person's self-assessment ability in the history of pedagogy.
2. to examine the modern practice of the process younger schoolchild's self-assessment formation in the contemporary elementary school.
3. to discover the pedagogical conditions of organizing the process of the formation of younger schoolchild's self-assessment ability.

4. to develop a methodical complex fostering the process of the formation of younger schoolchild's self-assessment ability.

The scientific novelty of the research.

1. The main objective was observed in the context of both Armenian and foreign history of pedagogy.
2. The essence, forms of manifestation and peculiarities of younger schoolchild's self-assessment that is being formed in educative process was discovered by taking as a basis the results of the studies carried out with a special purpose, as well as our long-term practice and work experience as a teacher in elementary school.
3. We have observed and systemized the main factors fostering the formation of younger schoolchild's self-assessment in educational process and developed necessary pedagogical conditions. We have developed a methodical complex fostering the formation of younger schoolchild's self-assessment ability. The structural components of younger schoolchild's self-assessment ability, principles, methods and peculiarities of organising the process of younger schoolchild's self-assessment, pedagogical conditions, teacher's and learner's competences and the guarantees directed to the parents are included in this complex.
4. The necessity, the process and the results of younger schoolchild's self-assessment formation have been observed in the context of providing learner's health and happiness.

Theoretical significance of the research. This methodical complex presented on the basis of contemporary scientific viewpoints, our studies and personal pedagogical experience enriches the complex of Armenian and foreign pedagogues' convictions. Principles, methods and ways of the solution of the discussed basic issue, pedagogical conditions, teachers' and pupils' competences, guarantees that we developed for parents may be considered as a bank of theoretical knowledge in the sphere of younger schoolchild's self-assessment formation.

Practical significance of the research. The content of our methodical complex fostering the formation of younger schoolchild's self-assessment corresponds to the demands of new assessment system, particularly to those of formative assessment, of curriculum standards of elementary school, comes from the education components of that layer of general education and can be applied in elementary school, especially in assessment process. It can be useful for teachers, methodologists, future pedagogues and to those who develop education policy.

The structure and scope of the work. The work consists of an introduction, three chapters, conclusions, a list of used literature and appendices. It includes 7 charts, 14 diagrams, 6 graphic images and 5 appendices. The total volume of the work is 141 pages of computer type.